

Իսկ նուէրներ հաւաքելու պաշտօնն ունեցող կրթական «Ֆօնտի Յանձնաժողովը» պիտի գումարի:

ՊԱՅԱՋՈՒՏԷՆ Հոկտ. 2 րուակահմով Պատրիարքարանի ուղղուած պատգամական նամակի մը հաղուած:—Օր աւուր կը սաստկանայ ճշնամբ Հայերուն հանդէպ: անցեալ Սեպտ. 27ին Արծափ գիւղէն երկու ժամ հեռաւորութեան վրայ կը սպաննուի թուրք ոստիկան մը անձանօթներու կողմէ, երբ լուրը կը հասնի կառավարութեան, այս վերջինը նմանը շտանուած փոթկոտութեամբ մը քիւրա հարիւրապետ Ատօն տասը ոստիկաններով և հարցաքննիչ դատաւորն ալ ի միասին կը զրկէ Արծափ գիւղ, 7 օր շարունակ ըստ գիւղացիները կը հարցաքննուին, տուները կը խուզարկուին, դանակ մը անգամ չի թողուիր Հայերուն քով, տանուտէր Առաքել Չաքարեան ընդհ. հսկողութեամբ կը զրկուի Պայազիտի բանտը, ստիպուած կ'ըլլայ զիւղի ծառային (գզիր) որ ըսէ թէ հայերն են սպաններ նոյն ոստիկանը. Արծափ գիւղը պաշարման տակ անուած է: Երկու ամսուան միջոցին 14 Հայեր սպանուած են, կացութիւնը յուսահատական է, Հայերը իրենց տունէն անգամ չեն համարձակուիլ զուրս ելլելու:

ՕՍՄ. ՄԷՊՈՒՍԱԿԱՆ յառաջիկայ ընտրութեանց շուրջ երէկ դարձեալ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, մասնակցութեամբ վարչական մասնախումբին, հայ կուսակցութեանց ներկայացուցիչներուն, ինչպէս նաև կաթողիկէ հայերու կողմէ Գր. Ոսկեան և Գ. Ս. Այս նիստին մէջ որոշուեցաւ նաև ծրագրի նախադիմ մը պատրաստել, բայց այնմ ընթանալու համար յառաջիկայ ընտրութեանց պահուն: Ոսկեան և Գ. յառաջիկայ նիստին յիստորուած պիտի գայ և պիտի բերէ կաթողիկէ հայերու վարչական ժողովին տեսակէտը: Հրաւիրուած են նաև բողոքական հայեր:

ՊԱՏՐ. ՓՈՒՍԱԿԱՆ ՈՐԴԸ երէկ Յունաց, Պուլկարաց և Ասորիներու Պատրիարքարանները, ինչպէս նաև գեոպանատունները շնորհակալութեան այցելութիւն տուաւ Յորելեանի առթիւ իրենց ըրած շնորհաւորութեան ի փոխարէն:

Տէր և Տիկին Պաղտիկ Նէվրուզ և որդիք, ձերակուտական Մ. Ազարեան և Գ. և Տիկին ու Օրիորդք Ազարեան, ինչպէս նաև հանգուցեալ Այրի Տիկին Վասիլուէի Մարչ-տեւանի բազմապարագաները կը փութան իրենց խորին շնորհակալիքը յայտնել ամէն անոնց որոնք թէ՛ անձամբ, թէ՛ գրով և թէ՛ հեռագրով հաճեցան իրենց ցաւակցութիւնը յայտնել ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՎԱՍԻԼՈՒՅԻ ՄԱՐՉՈՍԵԱՆԻ յուզարկաւորութեան առթիւ: Մասնաւոր շնորհակալութիւն ելնի գիւղի Այրեանայա եկեղեցիին կրօնական դասուն, որոնք զազաղին վրայ հանգստեան շարականներ կարգացին և երկու յոյն սգակիր քահանաներ ներկայ գտնուեցան եկեղեցիին մէջ: Նոյնպէս շնորհակալութիւն ելնի գիւղի հայ և յոյն հասարակութեանց, իրենց արտայայտած վշտակցութեան համար:

Այս առթիւ յիշատակելի էր ձերակուտական Մ. Ազարեան և Գ. և Տիկին Ազարեանի իրենց սիրեցեալ ժողովրդը զազաղին վրայ իբր յարգանքի վերջին նշան՝ դրած փառաւոր ծաղկեպսակներ, որ պատրաստուած էր եղանակիս հազուադիւրս ու արժէքաւոր ծաղիկներէն և որ մասնաւորապէս պիտի գարգարէ հաղուցելոյն զամբարանը:

Մէջերեան, Տ' միբժիպչեան ընտանիքները խորին շնորհակալութիւն կը յայտնեն ամէն անոնց որոնք ներկայ գտնուեցան:

ՕՐ. ԱՏՐԻՆԷ ՍԷՅԷՐԵԱՆԻ յուզարկաւորութեան և այդ տխուր առթիւ իրենց վշտակցութիւնը յայտնեցին:

Տէր և տիկին Արչակ Մազլեմեան և պարագաները իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց որոնք:

ՏԻԱՐ ՊԵՆՈՆ Ա. ՄԱԶԼԵՄԵԱՆԻ յուզարկաւորութեան ներկայ գտնուելով, իրենց ցաւակցութիւնը յայտնեցին այս տխուր առթիւ:

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ
ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՆՍՈՒՅՏ Ա. Ղ.
Երէկ առաւ բացուեցաւ 94-28
Ամէնէն վար գին 94-17
Ամէնէն բարձր գին 95-29
Երէկ իրիկուն գողուեցաւ 94-17
ԲՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ ԾՐ.
Երէկ առաւ բացուեցաւ 196-25
Ամէնէն վար գին 195-75
Ամէնէն բարձր գին 196-25
Երէկ իրիկուն գողուեցաւ 195-75

ԳԻՇԵՐՈՒԹԻԿ կարեւոր վարժարանի մը համար կարող մնայուն դաստիարակի պէտք կայ: Դիմել «Ժամանակ» խմբագրատունը:

ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր Ը

Յորելեանական կեդր. Յանձնաժողովին կողմէ եղած հրաւերին վրայ թաղերու մեծ մասին Մասնախումբերը երէկ եկան Ղալաթիոյ խորհրդարանը և իրենց հաշիւը տուին կեդր. Յանձնաժողովին: Յաւաքի է որ հաշիւ անհելուստ պարզ խնդրէն մէջ ևս կարգ կանոն չկուր: Թաղերը եկած էին հաշիւ տալու և իրենց հետ բերած էին կնքուած դանձանակները, տուրակները մէջը տասնոցով, հինգնոցով լեցուն և մէկ թաղին պատկանող այդ ժանրուքները հաշուելու համար, միւս թաղերը ժամերով կը սպասէին, պէտք եղած թուով համարող անձեր չըլլալուն համար, այնպէս որ թաղերու ներկայացուցիչներէն ոմանք առաջարկեցին թաղական Խորհուրդներու ներկայութեան իրենք հանել հաշիւներ, աւելորդ ժամավաճառութիւն չըլլալու համար և վաւերացուած կնքուած հաստատագրներով արդիւնքը տեղեկացնել, սակայն յանձնաժողովը մերժեց:

Իբր առաջին արդիւնք գոյացած է 20012 դր. 5 փարա, հետեւեալ ցանկին համաձայն:—

Խաղաղիւղի Յոր. յանձնախումբէն գոյքերու փոխարժէքը 1107 դր. 10 փր. — Պալաթէն ձեռամբ Պրն. Ա. Տարտագանեանի 1720 դր. — Սլիւսարի Երից Թաղից Յոր. յանձնաժողովէն 4417 դր. 5 փր. — ՅՆԻ Գաբուէ 2160 դր. — Գում Գաբուի Յոր. յանձնախումբէն (Ասպարէզ, Բնար, Յառք, Տիկ. և Մայր Եկեղ. Դպրաց Դաս) 1925 դր. 5 փր. — Գում Գաբուի Յոր. յանձնաժողովէն փոխան Շոգոատունբու (Ասպարէզ, Բնար, Յառք, Տիկն. և Մայր Եկեղ. Դպրաց Դաս) 2645 դր. 30 փր. — Գաբուի կողմէն Լէյկի թաղերը արուած հանդէսի զուտ հատոյթը 1976 թ. 20 փր. և փոխան գողառաներու 278 դր. — Տ. Սերովրէ վրդ. Սամուէլեան 103 դր. — Մայր Եկեղեցւոյ Դպրաց Դասու նուէր 540 դր. — Բեռայի Էսայեան Սանուց կողմէ գոյքերու փոխարժէքը 883 դր. — ՄԵՏԻԿԵԱՆ վաճառատան կողմէ Մեսրոպանկար թաղիկներու վաճառ-